

---

Պատմութիւն տանն Արծրունեաց. քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Մ. Հ. Դարբինյան-Մելիքյանի, Երևան, «Մագաղաթ» հրատ., 2006, 504 էջ:

Հայ հին գրականության բնագրերի գիտաքննական հրատարակությունը հույժ շնորհակալ, ազգաշահ ձեռնարկում է: Հրատարակի վրա են Թովմա Արծրունու և Անանուն պատմիչի երկասիրած գործերը, որոնք հայոց պատմական անցյալի արժեքավոր, վավերական սկզբնաղբյուրներ են: Աշխատասիրողը՝ հայագիտության անխոնջ նվիրյալ Մ. Հ. Դարբինյան-Մելիքյանը, երկար տարիներ հետազոտել է խնդրո առարկա գործերը, կատարել բնագրագիտական պրպտումներ, փորձել նորովի մեկնել դրանց առնչվող բազմակնճիտ խնդիրները:

Թովմա Արծրունու երկասիրությունը բաղկացած է երեք մասերից (դպրություններից) և 57 գլուխներից (ձեռագիր բնագրում գլխաբաժանում չկա), որտեղ արտացոլված են Հայաստանի հին նախարարական տոհմերից մեկի՝ Արծրունիների պատմությանն առնչվող եղելությունները՝ սկսած վաղնջական հնադարից մինչև X դ. սկիզբները: Թովմայի պատմության մի ստվար մասը (մինչև II դպրության Ե գլուխը) իբրև պատմաղբյուր ունի երկրորդական արժեք, քանի որ հեղինակը ժամանակակից չէ դրանում տեղ գտած անցքերին (բանաբաղել է հին մատենագիրներից): Ավելի արժանահավատ են II դպրության Ե-Է գլուխները: Վասպուրականի և Հայաստանի մյուս մասերի պատմության լուսաբանման համար բացառիկ արժեք ունի III դպրությունը, որտեղ պատմարժան ու հարուստ տեղեկություններ են հաղորդվում IX դ. երկրորդ կեսին Վասպուրականում, Տարոնում, Սասունում, Արցախում և այլուր Արարական խալիֆայության գորայինների դեմ հայերի մղած ազատագրական պայքարի մասին: Այդտեղ ուշագրավ տվյալներ կան նաև Հայոց Բագրատունիների թագավորության սկզբնաշրջանում տեղի

ունեցած իրադարձությունների, երկրի ներքին կյանքի, Վասպուրականում ծավալված շինարարական աշխատանքների և այլ եղելությունների մասին: III դպրությունը հետաքրքիր տեղեկություններ է պարունակում նաև Հայաստանի հարևան երկրների՝ Վրաստանի, Ադվանքի, Ատրպատականի, Միջագետքի մասին:

Ցավալի իրողություն է, որ ցարդ կորած է համարվում Թովմա Արծրունու Պատմության վերջին մասը, իսկ Անանունի երկից պակասում են թե՛ սկզբի և թե՛ վերջին մասերը, ինչը պատճառ է դարձել դրանք մեկ գրքում որպես Թովմայի երկասիրած գործ ներկայացնելու համար: Երկու մատենագիրների երկերի հեղինակային օրինակները չեն պահպանվել: Դրանք ամփոփող միակ ամբողջական ձեռագիր օրինակը պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում, 10451 թվահամարի տակ: Ձեռագիրն ընդօրինակված է 1303 թվին, Աղթամար կղզում, Դանիել գրչի կողմից, պատմագիր և Սյունիքի մետրոպոլիտ Ստեփաննու Օրբելյանի խնդրանք ու Աղթամարի Զաքարիա Ա կաթողիկոսի պատվերով: Սակայն հայտնի չէ, թե Թովմայի և Անանունի երկերի հեղինակային օրինակներից է կատարված ընդօրինակությունը, թե ուրիշ (դարձյալ մեզ չհասած) ձեռագրերից:

Այդուամենայնիվ, աշխատասիրողին հաջողվել է գիտական բժայնդիր քննությամբ, տևական աշխատանք ներդնելով, պատրաստել այդ մեծարժեք երկերի բնագրերի վերամշակված գիտաքննական հրատարակությունը՝ այն հագեցնելով բնագրագիտական ճշգրտումներով ու հետևություններով, ի մտի առնելով նաև նախորդ ուսումնասիրողների վաստակն այդ բնագավառում: Սրբագրել է Թովմայի

կողմից հին մատենագիրներից, Ս. Գրքից, հայրախոսական գրականությունից կատարված մեջբերումները՝ աշխատությունն օժտելով հարուստ ու բանիքուն ծանոթագրություններով: Անշուշտ, հրատարակությունը բնագրագիտական առումով շատ շահած կլիներ ուրիշ ձեռագիր օրինակների առկայության դեպքում: Աշխատասիրողը ջանացել է այդ բացը լրացնել Թովմա Արծրունու և Անանունի 1852 և 1887 թվականների տպագիր բնագրերում եղած տարբերությունները մոծելով ներկա հրատարակության մեջ, որտեղ արտացոլված են նաև Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող հինգ ձեռագիր ժողովածուներում տեղ գտած՝ Թովմայի Պատմության II դարության առաջին երկու գլուխներից վերցված հատվածի ընթերցվածները:

Թովմա Արծրունու օգտագործած աղբյուրների զգալի մասը հայտնի չէ: Հետազոտողը փորձել է վերականգնել դրանք, ինչը, անտարակույս, հաջողվել է նրան, թեև բնագրագիտական որոշ հետևություններ վերապահելի են: Այսպես, նա գրում է, որ Թովմայի «Յուլիան Աղիկառնացին ամենևին էլ նույնական չէ հայտնի եկեղեցական գործիչ Հուլիանոս Հալիկառնացուն, այլ իր իսկ հնարած պատմիչ է» (էջ 361): Թովմա Արծրունին երեք անգամ հիշում է այս պատմիչին, որն ապրել է III դ. և շարադրել համաշխարհային քրիստոնեության պատմությունը հունարեն լեզվով: Նրա երկից օգտվել է Եվսեբիոս պատմագիրը (մոտ 260–339 թթ.), որի «Քրոնիկոն» գրքի հայերեն թարգմանությունից օգտվելով՝ Թովման կողք կողքի հիշում է այդ պատմագիրներին, նաև Մովսես Խորենացուն, նույնիսկ գրում է, որ Ասորեստանի թագավոր Նինոսի մասին գրել է II դ. բաբելոնացի պատմագիր Աբյուդենոս Քաղդեացին, որին հիշում են Եվսեբիոսը և Խորենացին: Անշուշտ, Թովմա Արծրունին չի օգտվել Հուլիանոսի կամ Աբյուդենոսի գործերից: Եթե նա իրոք հունարեն բնագրերով ընթերցած լիներ դրանք, ապա ինչո՞ւ չպետք է տեղեկություններ քաղեր Քսենոփոնի, Ստրաբոնի, Պլուտարքոսի, Դիոն Կասիոսի, Հովսեպոս Փլավիոսի հունարենով շարադրված երկերից, որտեղ անհամեմատ հարուստ ու բազմազան նյութեր կան Հայաստանի անցյալի մասին: Մինչդեռ Թովման բնավ ծանոթ չէ և չի հիշում նրանց: Իսկ Հուլիանոս Հալիկառնացու անունը նա վերցրել է կամ Եվսեբիոսից,

կամ Խորենացուց, որին պատմագիրն ընդօրինակում է, ջանալով իր խոսքը (որն այժի չի ընկնում ճոխությամբ) հասցնել դասական բարձրության: Հայտնի է, որ միջնադարի քրիստոնեական մատենագիրները մեծ նշանակություն էին տալիս գրավոր խոսքին, քանի որ համոզված էին, որ միայն հյուրթեղ լեզվով կարելի է հասնել աստվածային էությանը: Անանունը դրա կարիքը չունեի, քանի որ նրա շարադրանքն այժի է ընկնում փայլուն ոճով, նկարագրողությամբ: Նա բացի Աստվածաշնչից, ուրիշ մեջբերումներ չունի: Մի անգամ վկայաբերում է հայտնի աստվածաբան Եպիփանոս Կիպրացուն (մոտ 315–403 թթ.), որի երկերը V դ. թարգմանվել են հայերենի (տե՛ս էջ 468, ծան. 3):

Հետազոտողը ճիշտ է նկատում, որ Արծրունի տոհմի ծագման մասին Թովմայի բերած ավանդական պատմումն անստույգ է: Բայց դժվար է համաձայնել այն կարծիքին, որ «...Արծրունյաց հին մեղական տոհմը, որի արմատները սկիզբ են առնում դեռևս ուրարտական ժամանակաշրջանում, գրադաշտականներ էին» (էջ 401): Նկատենք, որ Արծրունիների տեղաբնիկության հնարավորությունն ընդունել է Գր. Ղափանցյանը<sup>1</sup>: Հարկավ, Արծրունիները ունեին տեղական, զուտ հայկական ծագում, ինչը վկայված է Վանի թագավորության (Ուրարտուի) արձանագրություններում, որտեղ այդ տոհմի կենտրոնատեղին հիշվում է Արծունիունի (Ar-su-ni-u-i-ni-ni) անվամբ<sup>2</sup>: Դեռևս 1880-ական թվականներին անգլիացի հայտնի արևելագետ Ս. Սեյսը Արծունիունին նույնացրել է Արծրունի տոհմանվան հետ<sup>3</sup>: Անշուշտ, Արծրունիները գոյություն են ունեցել Վանի թագավորությունից ավելի վաղ ժամանակներում, և նրանց մեղական ծագումը կասկածելի է:

Աշխատության մեջ տեղ գտած ընդարձակ ծանոթագրություններն ունեն գիտական, ձեռագրագիտական հավաստի հենք: Դրանցից մի քանիսը կարող էին անգամ հրապարակվել որպես ա-

<sup>1</sup> Г р . К а п а н ц я н . Историко-лингвистические работы. Т. II, Ереван, 1975, с. 100–101.

<sup>2</sup> Н . А р у т ю н я н . Корпус урартских клинообразных надписей. Ереван, 2001, с. 48, 61, 63, 153.

<sup>3</sup> A . S a y s e . The Cuneiform Inscriptions of Van.– “Journal of the Royal Asiatic Society of Great Britain and Ireland”, XIV, London, 1882, p. 502.

ռանձին հողավածներ՝ հազեցված աղբյուրների վստահելի տեղեկություններով և ուշագրավ դիտարկումներով: Ընդ որում, հետազոտողն ի մտի է առել նաև հայագիտական հարուստ ավանդույթը: Դրա հետ միաժամանակ երբեմն ձգձգված են որոշ ծանոթագրություններ [օրինակ՝ ուրվականներին (էջ 371–375), Մանթոնին (էջ 378–384), Մուհամմեդ մարգարեին (էջ 425–428) նվիրված բաժինները]:

Հետազոտողը կարծում է, որ Թովմա Արծրունին սխալմամբ է Փայտակարանն անվանում Տիգրիս (էջ 438–439): Թովման, խոսելով 851 թ. Բուդա գորապետի կողմից Տիգրիս քաղաքի գրավման մասին, գրում է, որ վերջինս «...հրաման էտ հասանել ի վերայ քաղաքին Տիգրիս կոչեցեալ, որում յառաջագոյն Փայտակարան անուանեին. և ի փայտից մայրեաց շինեալ էր քաղաքն նոցա, պարիսպք և պատուարք և ապարանք նոցա և ամենայն տուն բնակաց քաղաքին և ամենայն կազմած պատրաստութեան նոցա» (էջ 194–195): Ուստի թշնամին «շուրջ փակեալ զքաղաքան հրձգութեամբ, և դիզեալ բորբոքէր հուրն ի դիրաձախ փայտէն մայրից և գիոց» (էջ 195): Վարդան Արևելցին գրում է. «Փայտակարան Տիգրիս է»<sup>4</sup>: Ինչպես տեսնում ենք, երկու մատենագիրն էլ Տիգրիսը կոչում են նաև Փայտակարան, նրա շենքերը, պարիսպները, ինչպես Թովման է հավաստում, մայրի փայտից կերտած լինելու պատճառով: Նշենք նաև, որ աշխատասիրողն իր կարծիքը հիմնավորելու համար վկայաբերում է Բ. Հարությունյանի «Փայտակարան քաղաքը և նրա տեղադրությունը» հոդվածը<sup>5</sup>, որտեղ ասված է՝ «Հ. Դրասխանակերտցու մոտ սխալմամբ Փայտակարան է անվանվում Տիգրիսը» և, ի հիմնավորում իր ենթադրության, հղում է Հովհ. Դրասխանակերտցու 1912 թ. Թիֆլիսյան հրատարակության 170, 187 և 195 էջերը<sup>6</sup>: Մինչդեռ պատմագրի մոտ երեք դեպքում էլ խոսքը միայն Փայտակարան նահանգի նույնանուն քաղաքի մասին է, որը նա բնավ չի նույնացնում Տիգրիսի հետ (որին քաջածանոթ էր): Նշելի է նաև, որ Փայտակարան քաղաքը՝ իբրև Մեծ Հայքի հյու-

սիսարևելյան սահմանագլխի կարևոր ռազմական հենակետ, քարաշեն էր: V դ. կեսին Մասանյաններն այն դարձրին իրենց հենավայրն ընդդեմ ապստամբ Հայաստանի և Աղվանքի:

Աշխատության մեջ Եսայի Ապումուսեն անվանված է «Աղվանքի իշխան» (էջ 439): Պետք է լինի «Հայկական Աղվանքի» (իմա՝ Մեծ Հայքի Արցախ և Ուտիք աշխարհների) իշխան: Եսայի իշխանի նստոցը Քթիշ ամրոցն էր՝ Արցախի Մյուս Հաբանդ գավառում:

Հետազոտողն իրավամբ նշում է, որ Թովմա Արծրունին սովորաբար պահպանում է իր աղբյուրների ժամանակագրական համակարգը: Բայց, հավելում է ուսումնասիրողը, քանի որ այս «տրամաբանական արդարացված ժամանակագրական համակարգից դուրս են մնում երկրորդ գրքի 5–6-րդ գլուխները և երրորդ գրքի 9–14-րդ գլուխները», ուստի դրանք շարադրելիս Թովման հարկ է որ օգտված լինի մեզ անհայտ աղբյուրից, որի հենքի վրա նա շարադրել է 851–858 թթ. Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունների պատմությունը: Եվ այդ անհայտ աղբյուրը պետք է լինեի Շապուհ Բագրատունու երկասիրությունը (էջ 444–445): Անշուշտ, Թովման կարող էր օգտվել Շապուհի գործից: Բայց դժվար է միանշանակ եզրահանգել, որ Թովմայի երկի նշված գլուխները բանաբաղություն են Շապուհ Բագրատունուց, որի Պատմությունը, ինչպես հայտնի է, չի հասել մեզ: Տարակարծության տեղիք չպետք է հարուցի նաև այն փաստը, որ Թովման վերը նշված գլուխներում ավելի մանրամասն է շարադրում տեղի ունեցած անցքերը, քան դրանց հաջորդած գլուխներում: 851 թ. խալիֆայության գորապետ Բուդայի կողմից Հայաստան կատարած արշավանքի ժամանակ տեղի ունեցած ահազարհուր անցքերը, հայրենի երկրին պատուհասված աղետները, սովն ու զերությունը, կոտորածները չէին կարող խորը դրոշմ չթողնել Թովմայի հոգում, մանավանդ որ նա դրանց զգալի մասի ժամանակակիցն էր: Ուստի, բնական մղումով նա պետք է ավելի մանրամասններ դրանք:

Անշուշտ, Թովմա Արծրունին Շապուհ Բագրատունուց օգտվելու պարագայում կարող էր նրա երկասիրած գործից հարասել որոշ մտքեր, մատուցել տեղեկություններ: Բայց հնարավոր չէ դրանք ի հայտ բերել: Նշելի է նաև այն փաստը, որ Թովմա Արծրունին ոչ մի անգամ չի հի-

<sup>4</sup> Աշխարհացոյց Վարդանայ Վարդապետի, Փարիզ, 1960, էջ 36:

<sup>5</sup> ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1981, № 12:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 75, ծան. 66:

շատակում Շապուհ պատմագրին, մինչ-դեռ յոթ անգամ հիշում է Մովսես Խորենացուն, ինչը, անշուշտ, վկայում է պատմահոր նկատմամբ նրա խորն ակնածանքի մասին:

Աշխատության մեջ Անանուն պատմիչի «առեալ էր գղուստրն Ապուհամզայի իւր կնութեան» արտահայտության (էջ 307) առնչությամբ ասվում է, որ տվյալ դեպքում «խոսքը Գագիկ Արծրունու երկրորդ կնոջ՝ Մլքեի մասին է: Նրա առաջին կինը Աշոտ I Բագրատունու որդի Շապուհի դուստրն էր» (էջ 465, ծան. 5): Հետագոտողը ելնում է Թովմա Արծրունու մի վկայությունից, որտեղ ասվում է, որ Սմբատ

I-ի եղբայր Շապուհը, մոտ 895 թ. ժամանելով Վասպուրական, «կացուցանէ գագիկ՝ իշխան Վասպուրական տէրութեանն. մանաւանդ զի փեսայացուցեալ էր Շապուհոյ գագիկ ի դուստր իւր» (էջ 260): Բայց այստեղ խոսքը ոչ թե Գագիկ

Արծրունու, այլ Գագիկ Ապուսրվանի մասին է, ուստի հարկ չկա Մլքեին համարել Գագիկ Արծրունու երկրորդ կին:

Մ. Հ. Դարբինյան-Մելիքյանը ճիշտ է վարվել՝ «Պատմություն տանն Արծրունեաց» գործը ներկայացնելով որպես երկու հեղինակների երկասիրություն: Աշխատության վերջում տեղ գտած հավելյալ գլուխը և հիշատակարանները արժեքավոր են որպես Վասպուրականի XI-XIV դարերի պատմության սկզբնաղբյուրներ:

Ցավոք, աշխատությունը գերծ չէ տառավրիպումներից:

Արծրունյաց տան պատմության նոր հրատարակությունն, անշուշտ, գիտաքննական հետևողական ու մանրաքննիչ աշխատանքի արգասիք է: Աշխատասիրողը խղճի մտքը ծառայելով հայրենի գիտությանը, շնորհակալ գործ է կատարել՝ գնահատանքի արժանի իր նպաստը բերելով հայագիտությանը:

ՎՐԵԾ ՎԱՐԴԱՆՅԱՆ